



ԵՐՈՒՅԻՒՆ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ԹՌՈՒՅԵԼԼ ՀԱՅՐԵՆԵՍԵՐ ԹԵՒՕՔ
ՅԱՐԾՐՈՒՆԻ ՄԵՆԵՍՏԱՆԻՆ ՎԱՐԵԴԱՅ
ՈՐ ԻՎԱՆՏՈՍՊ

Գ. ՀԱՏՈՐ	1859	ՅՈՒՆՈՒՆԱՐ
----------	------	-----------

ՆՈՐ ՏԱՐԻ

Ճախրի երկիր իւր իկարգ
Երեգին լայ ջինջ զուարթ
Հոգս կազմիր վարդամատ
Հոգ լայխարհաւ առնէ կաթ
Արծաթափայլուն լուսին
Մեզմիւ գայտէ գիշերին
Երտալածիկ փռնէ մուկ

Իսկ տարաբերըն տարին
 Կենաց աղեղն ՚ի բբուն
 Հողագնտին առնէ ման :
 Խաւար եւ լոյս ան միջնորդ
 Գործոց նորին կան հաղորդ :
 Նոտոս հնչէ հեղիկ սիւք
 Լեռնակուտակ հարկն ձիւնք :
 Քայ բաղձարին այն գարուն
 Յաջորդութեամբ նոր տարոյն :
 Յոր վարդ երին եւ շուշան
 Ի խաղս տուուաց կան զուարթուն :
 Եւ կաթնորակ աղբերունք
 Յայտեալ վիժին ՚ի մարմանդ :
 Վառեալ սոխակն սիրելոյն
 Չայնէ մեղմիկ վարդ երկոյն
 Եւ ետեւելոյ նոր գարուն :
 Խայտան դառինք ՚ի դաշտի
 Յարօտ կացեալ մակաղն :
 Եւ մայելոյ քաղցրաւոր
 Մարցըն ՚ի զերկըս կայտուն :
 Հըսկող հովիւըն բաջիկ
 Շեփորըն մեծ ՚ի ձեռին
 Եղանակէ ձայն քաղցրիկ :
 Հայկեան մանկաի փոյթ ՚ի քայլ,
 Քաջիկ կօշկօք կարմրափայլ,
 Ճիւղ ընթացիր ըստ տարւոյն
 Տխուր շիրիմ քոյդ նախնւոյն :
 Տուր աւետիս պատարուն

Թէ հա՛ բացաւ մեզ գարուն
Յաջորդութեամբ նոր տարւոյն :

Արսէն Յ. Թօխմախեան աշակերտ
Ճառանդաւորաց Վարժարանի :

Ա. ՀԱՆԴԻՍ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ
ԵԿԵՂԵՑԱՇԿՆ ՀԱՐՑՆ

ԳԻՒՏ ԱՆԸՍՏԳԻՒՏ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ :

Պտուղ լիութեան եւ հասկ ոսկեփունջ վերաբուսեալ
'ի բիւրաբեղուն անդատանէ աշխարհալոյս թարգմանչաց՝
երանելին ԳԻՒՏ էր 'ի Տայոց աշխարհէն, որ առ Վրաս-
տանաւ. 'ի գեղջէն՝ որ ասի Ալահիզան. 'ի վերջին հոգեւոր
ծննդոց նոցին թարգմանչաց՝ ճիւղ օրհնութեան մնացեալ
'ի հայրենի տան եւ խորին ծերութեամբ պարարտացեալ
եւ երկնաւոր քաղաքավարութեամբ միշտ երեւելի հան-
դիսացեալ. որոյ վասն յետ վախճանելոյն Մովսէսի կամ
ղիկոսի առաջնոյ, անդէն անդ՝ իբր մի միայն արժանաւոր
լուսաւորչական բարձր աթոռոյ եւ հովիւ քաջ րատ ան-
բարի ժամանակին, յորում բազումք յԱզգայնոց թուլա-
ցեալ 'ի հաւատո՝ անամօրէն զկնի Պարսկցն մոխրապաշ-
տութեան խարխափեալ կուրանային, կայուցանեն զնա
կամօղիկոս ընդհանրական հայոց :

Որայս գովութիւն Ղազար փարպեցի ազգային ընտիր
մատենագիր համոռօտէ այսպէս :

« Այր լի, ասէ, գիտութեամբ հայովս, եւ առաւելեալ յիւս
 « նիւն, յորդասաց բանիւ եւ առատաբուղիս վարդա-
 « պետութեամբ. զոր ոչ երբեք արգելոյր անգիտութեան
 « տկարութիւն, այլ զծածուկս ասացեալ հոգւոյն. նոյն
 « սուրբ հոգւոյն շնորհ յայտարարեալ նովաւ լուսաւորս-
 « պէս ուսուցանէր բովանդակ ժողովրդոց, որոյ բանք իւր
 « նման յորդառատ անձրեւի, զլավենայն լսողի ծաղկե-
 « ցուցեալ պողպատներէր զոգիւս) :

Իսկ զարմանալի խոնարհութեան իւրոյ զօրինակ՝ ունիս
 տեսանել ՚ի թուղթն զոր պրէ նոյն իկքն առ Դաւիթ ան-
 յաղթ փիլիսոփայն (տես յԱրժուոյն վասպուրականի Բ. հա-
 տոր 310 համարն) :

Այնպէս քաղաքակենցաղեալ զարմանալին Գիւտ եւ որ-
 պէս ծխածանն երբնագոյն, որ յամպս թխալաւոր առաւել
 պայծառ գունով եւ վայելուչ փայլի, նմին հանգոյն եւ
 սա ՚ի դառն հալածանաց եւ գերութեանց միջի՝ երկնաւոր
 առաքինութեամբ իբրեւ զնահ լուսալիր պայծառացեալ
 զեկեղեցւոյ աստուծոյ զկարգս կանոնականս ուղղեալ հաս-
 տատէր. եւ բոլոր սգացելոց աղբիւր մխիթարութեան ա-
 ռատացեալ, օփոփէր եւ կենդանացուցանէր հոգեւորա-
 կան անպակաս կերակրովն. զի հանապազօր առ ինքն ժո-
 ղովեալ ՚ի կապանայն Յազկերտի վերադարձեալ մեծ եւ
 հաւատաւոր նախարարին, անքուն ակամբ խրատէր ի
 քնէր գեկեղեցի Աստուծոյ ազատ կացուցանել ՚ի մոխրա-
 պաշտօնն հալածանաց եւ ՚ի պարսկայինն կատաղութենէ :
 Նոր մին քահանայապետ Ոնիաս եւ Նզդիազարտ յարուցեալ
 նորոյս Սիոնի, անվեհեր արիութեամբ ՚ի սէր հայրենի օրի-
 նոց եւ եկեղեցւոյ աստուծոյ նահատակեալ յայտնապէս
 անարգէր եւ արհամարհէր զօրէնս մոխրապաշտից եւ ըջ

հետեւողս նորին՝ ոչ ինչ զանգիտեալ ՚ի զարհուրանացն պարսկադեն կատաղութեան եւ ըստ Ղազարու « առ ՚ի » չժուժել սրտին՝ յայտնապէս յիշութեամբ գրգռել » ընդ անօրէն ուրացելոցն եւ սիրել եւ պատուել ըզկողմն » տառապեալ հաւատապելոցն :

Իրեռեալ ՚ի բանից երանելոյս ուրացեալն Գաղիշոյ մախազ եւ շուայտոտ, բողոք յատեանն Պարսից կարդայ առ Պերոզ արքայ, իբր բակտիչ օրինաց մոգութեան՝ խռովաբար եւ ներհակիչ արքունի հիւսմանաց :

Իրչի ապա ըստ մեծին Սահակայ պարթեւի ՚ի դուռն արքունի. ուր պանչելի համարձակութեամբ քարոզէ զճշմարտութիւն աստուածատուր օրինացս եւ անբասիր առնէ զանձն ՚ի չարաթոյն բանից լրբոյն Գաղիշեայ : Բայց արքայն Պերոզ առաւել ՚ի շնորհուկս մոխրապաշտից մոլելոց, արգելու զերանելին ՚ի կաթողիկոսութեան մարմնաւոր իշխանութենէ եւ հրամայէ երթալ յո՛ եւ կամեցի : Իսկ որ ինչ բանք եւ անվեհեր պատասխանիք են նորին առ Պերոզ եւ առաքելաջան քարոզութիւն եթէ կամիս՝ ընթերցիր Ղազար Փարպեցւոյ 186 երեսն, մինչեւ ՚ի 201 :

Ըրդ. ըստ նորին Ղազարու, « Կացեալ այնուհետեւ ՚ի »
 « դրան ըստ իւրում՝ կամելոյ Սուրբ Աթողիկոսն հայոց
 « Գիւտ, բազում համարձակութեամբ պատուեալ, ոչմիայն
 « ՚ի բահանայիցն այլ եւ առաւել ՚ի հիթանութեան, որ
 « իւրաքանչիւր ախտիցն գտանէին բժշկութիւն յաղճ-
 « թից Սրբոյն. եւ այլք ՚ի բրիստոնէիցն կողմանցն այնու-
 « ցիկ, ցանկանային ՚ի Սուրբ աջոյ սոն աւտուծոյ գտանել
 « ձեռնադրութիւն : Զորոց զոմանս ձեռնադրէր յեպիս-
 « կոպոսութիւն եւ զայլս բազումս յատիճան երիցու-
 « թեան կարգէր : Եւ այսպէս պատուեալ յամենեցունց

« ուրախանից շքեղութեամբ հրաժարէր գնալ յաշխարհն
 « հայոց . օրհնեալ զամենայնն յանձն առնէր աստուծոյ ,
 « յուղի անկեալ գնայր յաշխարհն հայոց . եւ կեցեալ ա-
 « ռաւելապէս պատուովք քան զառաջինն 'ի հայս , հանդ-
 « չէր երկայն ծերութեամբ , եւ եղեալ 'ի զիրս հարց
 « իւրոց խաղաղութեամբ ' 'ի գեօղն որ կոչի Ոյմսու . . .
 « 'ի գաւառին Վանանդայ . Եթող օրհնութեամբ զամե-
 « նայն ժողովուրդն սուրբ եկեղեցեացս հայոց :

Այս օրինակ պայծառ հանդիսիւ աստուած պաշտու-
 թեան բարձրացուցեալ զեղջիւր փառաղ հայսմասնեայց
 սուրբ եւ ողջամիտ եկեղեցւոյ սրանչելի կաթողիկոսն
 Գլուս , ուսոյց յետադայից իւրոց անձնադիր լինել անվե-
 հեր արիութեամբ 'ի վր սուրբ օրինաց եւ ուղղափառ հաւա-
 րոց . ոչ բնաւ զանգիտել 'ի մոլեղին կատաղութենէ իշխա-
 նութեանց եւ պետութեանց , որք բռնական օրինօք զմար-
 մին միայն կարեն սպանանել :

Եւ թէ՛ որպէս պայծառս ցուցանէ Աստուած զյինքն
 յուսացեալս առաջի անհաւատից անդամ եւ բարբարո-
 սաց :

Ուրեմն երանի է քեզ հարսնացեալ Եկեղեցի հայաս-
 տանեայց . որ ունիա այսպիսի փեսայ անվեհեր անձնադիր
 եւ միշտ ըղձակաթ 'ի սէր քո :

ԲՆԱՆԴԻՍԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԱԸԼՆ ԱՌԱՔԻՆԵԱՑ

ՎՈԱՄԵԱՊՈՒՔ ԱՐԵԱԿՈՒՆԻ ԻՄԱՍՏԱՍԵՐ ԵՒ

ԲԱԶՄԵՐԱՆՑ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ :

(Ժ) Ե օտար ազգաց եւ թէ մեր ազգային պատմութեանց մէջ կը տեսնա՞նք որ , մեր այն բարերար եւ մեծապարծ թագաւորներէն ոմանք՝ իրենց մեծամեծ աշխարհակալութեամբը եւ անպարտելի քաջութեամբը՝ աշխարհիս մէջի եկած երեւելի դիւցազանց կարող անցեր են . ուրոնք որ ազգին աբ քաջադորձութեանց ասպարեզներ բանալու առիթ բխալով , իրենց փեղեբալուր զորքերովը մէկտեղ տհարիտ երեւելի եւ համբաւաւոր ընելով՝ բարձրացներ են զայն բոլոր աշխարհի մէջ . արդ տրեւ այսպիսի բարութիւն մը մեծ երախտիք մըն է քաղաքակրթեալ ազգաց կարող անցնող ազգի մը համար : Եւ այն աշխարհաշէններէն ոմանք ալ՝ այն պանծալի քաջապարծութիւններէն զատ , իրենց ազգային երկրին մէջ այնպիսի կարգադրութիւններ եւ հասարակաց երջանկութեան եւ բարեկեցութեան համար այնպիսի հնարքներ մտածեր եւ ՚ի գործ դրեր են՝ եւ իրենց կառավարութեան մէջ այնպիսի կարգեր կանոններ տնօրինելու են որ , յիրաւի շատ հանձարաւոր թագաւորներ եւ երեւելի ազգեր զարմացիր

եւ իրենց նմանելու եւ կանոններուն հետեւելու նախան-
ձաւորութիւն մը ունեցեր են. արդարեւ այս ալ մեծ բա-
րերարութիւն եւ երախտիք մըն է որ՝ ազգը քաղաքա-
կրթութեան կողմանէ ալ երեւելի եւ պանծալի ըրեր են :

||մանք ալ ազգին մեծագործութեան հանճարոյն՝ արու-
ւետոյն եւ ունեցած կիրթ ախորժակին երեւելի ապացոյց
եւ պանծալի յիշատակ մը ըլլալու համար , զարմանալի
բանդակագործութեամբ եւ հոյակապ շէնքերով քաղաքներ
պալատներ վանքեր երկնամաս եկեղեցիներ եւ արձաններ
կանգնէր են , եւ իրենց ժամանակը ազգը փառաւորելն
զոտ՝ մինչեւ այսօրս ալ այն աւերակ եղած սքանչելի շէ-
նուածոց մասունքներուն անբարբառ լուծեամբը՝ ամէն
ազգաց աւջեւ՝ Հայկական այն ազնիւ ցեղին յատկու-
թեանցը եւ նախի՛ փառայը ստորագրութիւնները ընել
տալու արպարեզներ բացա՛յ են : Այն այն բարեբաղաց
ազգին լրաց աշխարհի շնորհքներն ալ մեծ երախտագիտու-
թեան եւ շնորհակալութեան արժանի են :

▲սպա ճշգրի մեծ երան ստիքութեան շնորհակալու-
թեան օրհնութեան եւ ոսկի արձան կանգնելու արժանի
է այն բարերար այն համեստաբարոյ եւ այն իմաստասէր
Թագաւորն Վառճապուհ որ , ազգի մը սիրտը միտքը յա-
գեցնող կենդանութիւն եւ անուիգ տալու միջոց եղող
յաւիտենական անխորոստ եւ անպառելի կերակուր մը
քնդհանուր ազգին մատկարարելու համար , հ.գ տա-
րաւ , այն կերակուրը կրտմ այն գեղեցկահիւս երկնապար-
դեւ գրեթէ՝ որ սուրբն Սահակ եւ Մեսրոպ պատրաստե-
ցին , ռալց զօրաւոր օգնականի մը ձեռնտուութեանը կը կա-
րօտէին . գտան իրենց սրտին մօտաւոր եւ կամայը համեմատ
այնպիսի եռանդուն աշխատող եւ առաքինի անձ մ'ալ :

դտան այն ոսկեդարեան տաճարին այնպիսի ոսկեղէն փուն
մալ , որոնց վերայ հրաշարի կերպով կանգնեցաւ այն ի-
մաստութեան ազգային գրաւորական ճոխութեան սքան-
չելի տաճարը . որ մինչեւ յայսօր Հայկազունք ակնածու-
թեամբ եւ օրհնութեամբ կը կարդան եւ յաւիտեան պի-
տի կարդան այն սիւներուն պատկառելի անունները . ՍՐ-
ՀԱՆԿ , ՄԵՍՐՈՊ , ԽՈՐԵՆԱՅԻ , ԵՒ ՎՌԱՄԵԼԱՊՈՒԷ ,
որք եւ բարերարք՝ երկրորդ լուսաւորիչք՝ եւ մեծ երախ-
տաւորք Հայկազնեան սեռին :

Ահա ասիկ ազգը այնպիսի դարի մը մէջ այնպիսի թա-
գաւոր եւ պաշտպան մը ունենալու բարեբախտութիւնն
ունեցաւ , որն որ իր անստգիւտ հանձարովը եւ ուսումնա-
սիրութեամբը՝ տեսնալ ուզեց իր բոլոր ազգին մէջ ուսման
եւ գիտութեան յոյս տարածուած ըլլալու երջանկութիւնը .
բայց մտածեց թէ՝ այս յառաջագիմութեան մէկ հատիկ
օգնական եւ միջոց եղողը՝ ընդհանուր ազգը խաղաղու-
թեան եւ հանդարտութեան մէջ պահելու ջանքն է . ասոր
համար՝ մեծամեծ քաջութիւններէն եւ յազմութիւննե-
րէն ստանալիք փառքերէն ավելի զօրաւոր դիւցազնական
քաջութիւն եւ մեծ փառք սեպեց իրեն՝ Հայաստանի այն
երկու դրացի եղող Յունաց եւ Պարսից խրոխտ ազգաց
անիրաւ յարձակմունքներէն որ եւ իցէ հանձարաւոր հը-
նարքներով եւ ճարտար միջոցներով ազգը պաշպանելը ,
բան թէ ալեկոծեալ նաւի մը նման բազմատեսակ խռովու-
թեան եւ նեղութեան ու հետեւաբար տգիտութեան խա-
ւարին մէջ թշուառացեալ տեսնալը :

Այն՝ կատարեցաւ սրբոց թարգմանչաց փառաբը . եր-
ջանկացաւ բոլոր ազգը որ՝ այնպիսի ուսումնասէր թագա-
ւոր մը ունենալով , իր հզօր իշխանութիւնը եւ հարստու-

Թիւեր ուսման եւ գիտութեան համար գործածեց , եւ ամենայն զօրութեամբ աշխատելով եւ զարմանալի եռանդով՝ բազմաթիւ դպրոցներ ձեւադրանքներ բանալով , մէկ խօսքով ուսման վերաբերեալ ամէն պէտք եղած ծախքերը առատաձեւեալ թեամբ եւ սիրով հոգալով , քիչ միջոցին մէջ ազգը դիտութեան ասպարէզին մէջ մտցուց՝ եւ հետեւաբար երեւելի եւ երանելի հեղինակներու արդեամբը քրտամբը եւ աշխատութեամբը ազգը պայծառացաւ , որն որ անոնցմով մինչեւ չայսօր կը փառաւորի եւ կը պարծի աւմէն ազգաց ամեն եւ յաւիտեան պիտի պարծի : Արտեսնամբ որ Մակեդոնացին Աղէքսանդր՝ թէ եւ ինքն էր այն իմաստալից եւ պատուական առակին հեղինակը որ կրտէր թէ , « Ի իր առնուլ պարտ է զժամանակն » , ինչ օգուտ որ՝ մտամբ մը միայն ինքն ճանչցաւ ժամանակին յարգը , ուրիշներուն օգուտ մը չունէր : Բայց մեր այս դիւցազն իմաստասէրը՝ ժամանակին յարգը ինքը ճանչեալէն ետեւ , ընդհանուր ազգին ալ ճանչցընել տալով՝ հազարապատիկ եւ բիւրապատիկ աւելի արդիւնքներ ունեցաւ : որն որ օրինակ եւ դատաւարակ եղաւ թէ իր ժամանակակիցներուն՝ եւ թէ ետքէն եկողներուն : Ուրիշ իրաւունք ունիմբ ըսելու՝ թէ գերազանց փայլեցաւ աշխարհիս մէջ իր ցանկալի գործքերովը արքայն Հայոց իմաստունն այս Առաւելագուհ՝ բան զսնտախտէր աշխարհակնի Աղէքսանդր :

Փառաբանելի է այս տեղը քիչ մը մտածել թէ , այն ժամանակը որ Առաւելագուհի պէս թաղաւոր մը ազգին տէր եւ զլուս կեցած հարստութիւն եւ զօրութիւն ունենալով , անոր միջոցաւ ազգը այնչափ մեծամեծ բարութեանց ձեռնամուխ եղաւ . այսու ամենայնիւ՝ թէ որ պարծանք է

այն ժամանակուան ազգայնոց ըրած յառաջագիմութիւնը, հապա հիմա որ ազգերնին ընդհանառան այն ամէն զօրանոր կարողութիւններէն եւ միջոցներէն զրկուած ըլլալով, այս անտերունջ աղքատ եւ որ աւելի ցաւալին է մէկզմէկէ բաժնուած ցրուեալ վիճակին մէջ որ, ազգայնական ոգւով մէկզմէկու ձեռքէն բռնած՝ միասիրտ միասորհուրդ ՚ի միասին դիտութեան այն ցանկալի տաճարը Արարատայ մէջ կրկին սքանչելի կերպով կանգնելու կը ջանան, ուրեմն որչափ եւս պաւաւել արդիւնաւոր եւ յուսաբեռնական յիշատակաց արժանի եւ պանծալի պիտի ըլլայ իրենց աշխատութեան պտուղները որ, ամէն շաբթուա՝ ամէն ամիս՝ օրագիրներու մէջ ուրախութեամբ կը կարդամք, իր տեսնամք թէ ընդհանուր ազգերնին մասնաւոր սիրով մը վառուած, ամէն տեղ ամէն քաղաքի եւ ամէն գաւառի մէջ նոր-նոր ընկերութիւններ կազմելով զպրոցներ ձեմորաններ կը հաստատեն, եւ յառաջագիմութեանց արդիւնները աւելի պտղաւէտ ընելու համար, երբեմն երբեմն դիտողութիւններ քննութիւններ ընելով, յառաջ եկած պտուղները ընդհանուր ազգին ծանուցանելով՝ իրենց զգացած ուրախութիւնը եւ քաջալերութիւնը ամէնուն ալ կը հազորութեն, եւ որ եւ իցէ կերպով թէ արդեամբ թէ զանազան տեսակ աշխատութեամբ եւ թէ յորդորանօք՝ մէկզմէկու ձեռնառու եւ օգնական կրէլան, արդեօք ո՞վ չգիտեր որ ազգը այս աշխատութեան արդիւններէն միոյն հազարապատիկ եւ բիւրապատիկ պիտի վայելէ՝ եւ բոլոր աշխարհք իր արդիւնաւոր աշխատութիւնը տեսնալով պիտի գովէ ու փառաւորէ։

Թէպէտ եւ ազգը Վաւաշապուհի ունեցած ազգօգուտ հրամանները մէկէն ՚ի մէկ ՚ի գործ դնելու արքունական

զօրութիւնը չունի, բայց ունի անոր տեղ, այն ազգասիրութեան հաստատ զօրութիւնը որ՝ բնաւ մէկէ մը տկարանալու երկիւղ չկրէր, եւ միշտ զօրանալու եւ պայծառանալու վերայ է. եւ ամէն ժամանակ ամէն տեղ ամէն դժուարութեանց յայլթելով, մեծ յառաջադիմութիւններ բրած է եւ կրնէ. ուրեմն այսպիսի զօրութիւն մը՝ աւելի մեծ եւ ընդարձակ է բան զՎռամշապուհինը, վասն զի այս ամենայնակալի դիւցազնական առաքինութիւն եղող ազգասիրութիւնը՝ անոր արժանաւոր տեղ պատրաստող անշահօխնդիր ազգայնոց բազմութիւն սրտելու մէջ բնակած է :

(Թ) Է եւ ազգը չունի հիմա այն Վռամշապուհի հայտուութիւնը, բայց այն պակասութիւնը լեցնելու բարեբախտութիւնն ալ ունի, վասն զի՝ բանի որ առատաձեռնութեան ազնուական յատկութիւնը իրեն բնական առաքինութիւն մըն է՝ որն որ ազգասիրութեան եւ ուսումնասիրութեան հետ միացած ըլլալով, այնպիսի մեծագործներ ունեցած է եւ ունի, որոնք այնպիսի բարերարութիւններ բրած են եւ կրնեն որ, Սահակայ Մեսրոպայ եւ Խորենացւոյն ընթացքին հետեւող անձնանուէր բրանաջան եւ առաքինի անձանց՝ ամենայնիւ ամենայն մասամբ ձեռնտուութիւն ընելով, խրախոյս եւ յորդոր ըլլալով՝ Վռամշապուհէն աւելի գործեր կը կատարեն :

(Ա) Եւրեմն բանի որ ազգը այս ձիրքերուն անսպառ գանձը ունի, որն որ ուսման եւ յառաջադիմութեան ընտիր միջոց մը ըլլալով, մեծ յոյս ունիմք որ՝ Աստուծով ազգերն իս բարութեանց եւ երջանկութեանց ցանկալի պսակը պիտի ժառանգէ :

Գ . ՏԵՍԱՐԱՆԻ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՑ

ԱՐՏԱՄԵՏ ԳԻՒՂ .

Տօսք գաւառը որ Բզնունեաց ծովու արեւելակողման մեծ մասն պատեր է , Վան քաղաքովը մէկ տեղ՝ իւր մէջն պարունակած ունի շատմը վանքեր եւ գիւղօրէք : Որոնցմէ խիստ երեւելիներն եւ 'ի հին ժամանակաց անուանի եղածներն այս տեսարանիս մէջը պիտի հանդիսանան պատշաճաւոր կերպով : 1858 տարուան Վ . Արծուոյ թերթից Վարազայ եւ Վան քաղաքի տեսարանացը եղանակաւ եւ ոճով : 'Եւս անոնց հնագիտական տեղեկութիւնները 'ի հին մատենից քաղած համառօտելով եւ ապա արդի տեսարանն ականատես ստորագրելով :

Եւ որովհետեւ Արտամետ անուանի գիւղն է վանէն զկնի՝ գաւառիս միջի շինանիստ բնակութեան երեւելի տեղին , այն պատճառաւ՝ առաջին տեղի ունեցաւ նոր տարոյս շարունակութեան սկզբնական գլուխ լինելու պատիւ ունենալ :

Եւս գիւղ Վան քաղաքէն փոքր ինչ յարեւմտակողմն շեղեալ հարաւ կիյնայ , երեք ժամու միջոց հեռուորում թեամբ . որոյ այդեստանեայց ստորոտը սաստկութեամբ կը ծեծուի Բզնունեաց ծովու խիստ ալիքներէն :

Լըկը որդ Արտաշէս Արշակունին, իւր մանկութեան ժա-
 մանակին երբ Սմբատ հայրենի օրինաց նախանձախնդիր
 եւ բաշատիր իշխանի առաջնորդութեամբ, անհարազատ
 Երուանդ Թագաւորի կատաղութենէն ՚ի Վարսկաստան
 կ'փախչէր, շաքաթօրեայ ժամանակաւ Այս դիւղիս տեղւոյ
 քարաժայռերու մէջը պահուրտած մնաց. մինչեւ որ Եր-
 ուանդայ խնդրակներ ունայնայոյս ետ դարցան. եւ երբ որ
 պարօց Դարեհ Թագաւորի ձեռնտուութեամբ Արտաշէս
 կրկին իւր հայրենի Թագն ժառանգելով անհարազատ Ե-
 րուանդն իւրայովք բնաջինջ կորսնցուց եւ բոլոր հայաս-
 տանի միահեծան Թագաւորելով, Ալանուր հետի սպառե-
 րազմն ալ մեծ քաջութեամբ եւ յաջողութեամբ վճա-
 րեց եւ Սաթիւնիկ անուն չքնաղ օրիորդն Ալանաց իւր
 հարսնութեան բերսւ եւ ամէն կողմանէ իւր լայնայծա-
 ւալ տերութիւնը խաղաղացոյց եւ նոր շինութեանց ձեռք
 զարկաւ, այս Արտամետու ծովահայեաց տեսարանին վրայ
 զարմանալով եւ որովհետեւ իւր վրկութեան ալ տպաւն
 եղած էին նոյն վիմամէջ այրեր, անոր համար հրաման կը-
 նէ բազմաթիւ ճարտար գործաւորներու, որ շուտով եւ
 ամենալայելուչ տեսքով ամսրանոց քաղաքմբ հիմնարկե-
 ցին եւ ամուր կերպով ծովու մէջէն հիմունքները հաս-
 տատելով բիւրացուարձ գեղեցկութեամբ աւարտեցին.
 տեղոյն խիստ գուարճալի տեսքն ալ նոյն մեծագործ ջի-
 նութեանցը ժօանդակ եւ առաջին շքեղացուցիչն ունեւրով
 Ինչպէս որ Թովմայ Արծրունին կ'սէ, « Դինէ զբարբաբուն
 զարմարանս արքայանիստ աշնանայինս պայծառնայալ-
 արս գեղեցկայարմար պարսպաւորս ընդ դէմ ծիծա-
 յոյդելով ծովուն ՚ի հիւսիսի նայեցուածով, արեգակնային
 » ՚ի վերայ խաղալով ճառագայթաձիւք ձեւականացն,

« Եւ ի մուտս ձկան իմն թուելով ի վերայ մկանայ
 « ալեացն խաղալով , ընդ գէմնայեցածն ունելով զմեծ
 « լեռնն մասիք (15) կոչելով բարձրագագածն ձկնալիւ
 « սպիտակափստ , իբր զթագաւոր մեծաւայելուց պատ-
 « ռական տլեօք զուարճացեալ ի մէջ ճոխ նախարարու-
 « թեանց , առաջն տեսնելով զկապուտակ ճիւղանք վայլ
 « դաշտաձեւ ծովն :

Իսկ տեղւոյն գրից եւ միւս շինուածոցը համար եւս
 նոյն ճարտար գրիչն իւր պատմութիւնը կշարունակե-
 նայալ :

« Իսկ ի մէջ երեք արմատեան գողաձեւ հովտին փո-
 « քու որ յերկր բլրոյն խոնարհի , շինե աշտարակ բարձ-
 « րաբերձ փորածոյ միջոցաւ , եւ ի վերայ նորա կանգնե-
 « զԱնտոյկեան պատկերը , եւ մօտ նորա զտուն քանձու-
 « պաշտպանութեան կողմէ , կարգէ եւ յօրինէ ի նմա
 « փողոցս վաճառոց ամենալիցս եւ բաւականս քտանէ եւ
 « ի վերագոյն լերինն անդր ի հարաւոյ կողմանէն աղ-
 « բլւր սակաւաբուլիս , որոյ ջրմուղ կազմեալ ածեալ հա-
 « սուցանէ ի մէջ հովտին :

« Իսկ ըստ բաւականութեան աշաց տեսութեանց դուռ-
 « տաւայրին ի մուտս իւրո , եւ նա զգերբ ծովուն պարս-
 « պաւորս յօրինէ զգոգն ընուլ այդեստան տնկախիտ պատ-
 « աստութեամբ սկանախիտ վայելչութեամբ , եւ իբրեւ
 « կատարեաց զյօրինուած շինութեան քաղաքին եւան-
 « մատչելի տնկատեմէրի պարտնի պատրաստեաց , կոչեաց
 « զանուն ամրոցին զարդ , այսինքն պայծառութիւն ի վե-
 « րայ պայծառեցարդար շինուածոյն :

« Եւ ածեալ զտիկինն Սաթինիկ զբօսնուլ յաշիննայ-
 « ին եղանակս յամարաստուն գեղեցիկաչէն յապարանս

« զարդարեալ բերդին : Իսկ զանունն քաղաքին կոչեցին
« Արտամատ՝ որ թարգմանեալ ստուգարանի Արտաշիսի
« ձեռակերտ , կամ թէ Արտաշիսի եկք , զի ըստ պարսկի
« ձայնի (մատ) եկք թարգմանի , զի ՚ի դնալ Արտաշիսի
« յայսմ տեղւոջէ , ոչ եւս յաւել ձեռն Երուանդայ
« տագնապել զնա :

Այս ահագին մեծագործ շինութիւնը , որ Քրիստոսի
89 թուականի միջոցները կիյնայ եւ անկէջ մինչեւ հի-
մայ 1770 տարուոյ չտի է , ժամանակաց հնութիւնը մա-
շեցնելով մաշեցնելով այժմ 100 տնւոր դեղմը դարձած
է : Հնութեան մնացորդ մէկ երկու բան մնուակ մնացած
է որոնց վրայ պիտի խօսիմք :

Իսկ ծովուն եզերքը մշակուած այգեստանեաց չորս
փարախաչափ տարածութիւնը շատ զմայլեցուցիչ եւս զը-
ռարձաքի է : Երուն ստորագրական գովասանութիւնը ես
կ'ընեմ , թող արժանապատիւ Հրաւիրակն Այրարատեան
իւր հայրենապատակ ճարտար գրչովը պատկերացնէ :

« Չեւ ըզձեզ յայլ վանորայս :

« տարեալ աստուատ՝ ինձ կամ է նախ :

« Տանել ՚ի Արտամեա :

« Արտաշիսէն շինեալ աւան :

« Որ ահա մօտ է մեզ :

« եւ երեւին ծովուն յեզեր :

« Բռնաստանք իւր բերունակ :

« պէս պէս տրնկովք ուռձագարդեալ :

« եւ մըրդովք մեղրահամ :

« Ղրախտին բերէ զնմանութիւն :

« Ի՞նչ պըտոյց սորին բոլոր :

« Է պատուական եւ գթօտեցիկ :

” Ճոխածիր առատութեամբն
” եւ սեպհական ազնիւ ճրրիւքն
” Բոլորէի բուրաղըւարթ
” անուշահամ կարմիր խնձորն :

” Որ յորժամ գայ Վարդալաւն
” եւ արեւուն սաստկանայ շողն՝
” Շիկին հասունացեալ

” դառնան բնաւին յարեւներանգ,
” Եւ ճղալից լեալ ըզ ծառայն
” կարմիր կարմիր կախին 'ի վայր :

” Չանձրանայ պարտիզպան
” 'ի թօթափել եւ ժողովել :

” Գան խրոնին նաւքն 'ի ծովու
” եւ կարուանքն 'ի ցամաքի :

” Պատարուն բեռնաւորեալ
” ածին վաճառ հեռաւորաց :

” Ահա բերք հայոց երկրին
” արդար ազատ 'ի զըժրանաց :

” Այսպէս ամի ամի
” երկրագործին շնորհեալ 'ի պէտս :

” Եւ սն քաղաքի մրցեղինաց եւ փայտի առատութիւնը
այս այգեստանեսցը վրայ է . որուն համար անընդհատ
շարունակութեամբ կարաւանաց եւ բեռնաւորելոց երթ-
եւեկութիւն կ'ընի եւ այգոյ տէր եղորդներն ալ մեծա-
պէս վատասկ կ'ընեն :

” Այս դիւզիս բնակիչքն են հայ եւ տաճիկ . բայց իրար-
մէ որոշուած . զի հայերն կ'բնակին բուն գիւղին մէջը ի-
րենց հայրենեաց հնութենէ մնացորդներն սիրով գրկած
եւ անկէ բնաւ չհեռանալով . իսկ տաճիկներն յայդ եւ-

տան , որուն ամենագեղ վայելչութիւնը փնտրեց իւրեանց սեպհակաճայքի վայելելու եւ արարտագին ալ կը շահին :


• 2006/11 (պիտի շարունակուի :)

[illegible]

Անդրապարտ լինելով:

1890-1891

...and the ...



you have not yet received it. I am sorry.

Գ. ԲՈՒՐԱՍԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ

[Faint handwritten notes at the bottom of the page]

1874

УАКАВЗ

... ..

Զին պատմութեանց մէջը կրկարդօսմբ թէ, Թաղաւորին
 մէկը երկու մեծ նախարար ունեցեր է, որոնք իրարու հա-
 ւանհաշտ թշնամութեամբ եւ նախանձաբեկ հոգւով կը վա-
 րէին միշտ : Օրմբ Թաղաւոր զատոնք իւրեանց Աբբունի
 գործոց մէջ ցցուցած բաշտութեանցը փոխարէն վարձա-
 րեղու համար իւր առաջը կ'իյնէ, ու կրօ՛ք բարեկամք, ըլ-
 ձեզ՝ ձեր հաւատարմութեամբ թշնամացը փոխարէն պիտի
 վարձատրեմք ինչ կերպով որ ձեր կամացը ցածնութիւն կա-
 խորէի : Բայց գիտնաք որ, ձեր երկուքէդ առաջիւր ինչ

որ խնդրէ . միայն անոր խնդրածին երկտէքին չափ պիտի
շնորհեմ . առաւ արտիւ . Յառաջադէմ նախանձողն այս որ
կրէ , գլուխն կրկ առնայ . սիրաբն . ասկնու վրայ մի լինի , եւ
րեսի գոյնն կը դաբլանայ . մինչ ընէ . հարատու թիւն եւ քա
ղաք ուղէ . իւր սխերիմ թշնամին երկու այնչափ պիտի
փառաւորի , եւ մեծանայ . եթէ հանգստութիւն եւ ազա
տութիւն նմանապէս . որոնցմով ի հարկէ ինքն նախանձու
տաստիկ կոտորեցնելով ի յաւիտեան պիտի չարչարի . Ուս
տի այս անդամիս ալ նոյն չար ախտի անքուն որդերուն
կերակուր մը շնորհելու համար . կը պատասխանէ , Տէր ար
քայ կը խնդրեմ բեգմէն . որ իմ մէկ չաքս հանես . ո՛հ նա
խանձու անհնարին կուրութեան Ասով խաբ հակա
ռակորդն բողոքովին շուտ գրկուելու ամենաչար թշուա
րութեան մէջ կը ձգէ :

Ուրբ եկեղեցւոյ վարդապետներ Այս չար նախանձն
կ'անանցունեն կենդանի մարմնոյ ոսկորներու փառութեան ,
որուն համար բժիշկներ կրսն թէ , մարդկայինս մարմնոյ
վրայ պատահած ավէն ցաւերէն դժնդակ եւ ստատկազին
մորմոգեցուցիչն է . Որ միանգամայն կերցաւ նման ան
հադ ուտելով կայրէ կըմրկեցունէ , եւ բարեկայելու չ մար
մնոյ տեսքը կապականէ , կենդանոյն մեռելաւորայ կերպ
րանքմը ողորմելի մարդոյս վրայ ամելով , Յիրաւի ասկէց
աւելի պատկանաւոր օրինակմը չիկարել լինել այս չար եւ
հոգեպան ախտիս . Ինչպէս որ սուրբն . Օգոստինոս ալ
կրսէ . « նախանձն հոգւոյ ցեց մընէ . որ մարդոյս զգնցա
րանքն կուտէ կայրէ ու կը մրկեցունէ մարդոյս սիրտն . ու
ղէշ թանգի նման կապականէ եւ կ'իշխուցնէ մարդոյս
բոլոր բարկքները » . Ինչու որ վնասակար որդի նման կեն
դանի մարմնոյ մէջ մտնելով միշտ կը ճարակէ ու կընկէ :

Եւ կամ ժանդի նման, որ երկաթին ամբուծիւնը կ'ըլլած է
 եւ անպիտան կընէ և մարդոյս միտքը կ'ուշաթափէ եւ իւ
 մացականութիւնը կաշկանդելով՝ չի թողուն որ առաջադիր
 գործոյն վրայ մտածէ քուն աչքէն կ'ըստնայ ու շափէ
 դուրս խռովութիւնը կը ծագէ հոգւոյն մէջ, որով բոլոր
 մարմինը դողման եւ ցարսափի տակ կը հեծէ ։

Եւ խիստնձոտ մարդն՝ ուղղակի ընդ գէմ հոգւոյն սրբոյ
 քրեական մեղօք կ'մեղանչէ ։ Ինչու որ նոյն չար ախտէն
 կուրացեալ կը տփսուի ի չարէն՝ բարւոյն գէշ քսել ։ Եւ չա
 րին բարին լուսոյն խաւար՝ եւ խաւարին լոյս՝ որ յատկա
 պէս է ընդ դէմ հոգւոյն Սրբոյ ծառի եւ սարսափելի
 մեղք կարողա՞նք ԹԲ. 31 ։ Ս՝ ԲՊԻ. Գ. 28 ։ ԴԵ՛
 ԿԱ՛՛ ԺԱ. 15. 16 համարներն ։ Տիրապան հրեայք նա
 խանձու ախտէն կուրացեալ լաւ գիտէին որ Յիսուս Զո
 գւով Սրբով կը գործէր՝ այն գերբնական գործքեր՝ բայց
 ինչ օգուտ նախանձու դէմն կատարէր զիրենք որ բեհեղզե
 բուղին տան ։ Ինչպէս որ արդի ժամանակս ալ շատ սյու
 պիսիներ աչքերնուս առաջ կ'տեսներ ։ Բաղաճականու
 թեան եւ ընկերական յառաջադիմութեան ալ շատ մեծա
 մեծ եւ անկշռելի վնասներ հասուցանելով արդեւք եղած
 է այս չար նախանձ ։ Ըստ որում ինչպէս որ զաղրատեալ
 որդեր նեխութեամբ եւ քարշիլի փտութեան յաճախու
 թեամբ կը սնանին եւ կ'պարարտանան անոնց պէս ալ նա
 խանձոտն իւր ընկերին վնաս հասուցանելով միշտ կ'սու
 ցանէ իւր անյագ չար ախտն ։ ար Սաղմոնեան տգրուկի նման
 ծծելով ասիւնքն վնասելով վնասելով չի կշտանար ։

Ո՞վ էր նախաստեղծ աշխարհին ցօղոյ՝ եւ անձրեւայ
 քաղցր կաթիլներուն տեղը՝ իւր հարազատին ձեռամբ
 քստմնելի արեան վիժակներ խմելի տուող նախակ ։

Ո՛վ էր Յակոր նահապետի բարեկարգ գերտաստանին վրայ
սգոյ եւ ալտուութեան թուխ ամպն տարածող, որով վշտա-
ցեալ ծերունին կը հստաչէր ասելով, իջուցանէք զիցա-
ւօք ծերութիւնս իմ՝ ի դժոխս . Ճննդոյ Ժ. 38: ոչ ապա-
քէն Յովսեփայ եղբարց մարդատուոշ նախնին էր : Դըպ-
րաց եւ փարիսեցւոց հոգւոյ աչքն կուրացնելով արդա-
րութեան լուսոյն նայելու թող տուողն եւ իրդին Ատու-
ծոյ՝ անմեղն ՚ի յաւիտեանց իբր յանցաւոր եւ պատժա-
պարտ ՚ի մահ դատապարտուլ տուողն ո՞վ էր . որով մնացին
յոռակ յաւիտեանական . նախնի : Մեր հայոց Արշակունի
եւ Բագրատունի իշխանութեանց ժամանակի նախարար-
ներ վեր ՚ի վայր ընող եւ բոլոր Հայաստան Աշխարհս ան-
շքութեան հասցնելով օտարասեռ ազանց ոտնակոխ ընել
տուողն ո՞վ էր . նախնի :

Մըջմիկ սուտ անուն քահանայի ձեռամբ Տէրուհական
Սուրբ եւ ահաւոր խոյ հրդեղն մէջ թոյն խառնելով Ու-
լումպիադա թագուհին մահացնողն ո՞վ էր, նախնի :

Ո՛վ մոլութիւն չար եւ ամենաչար հոգւոյ եւ ամէն ա-
ռարկնութեան թշնամի . Անձին առողջութեան եւ բարե-
կեցութեան թշնամի . բաղաբականութեան եւ բոլոր բա-
րեկարգութեանց թշնամի եւ թշնամի : Եղէ՛ թէ բո աբ-
մատդ չորացած բնաջինջ բարձուէր երկրէս : Ո՛վ վաղը
կատաղի՝ երբ պիտի դադարիս անմեղ արիւններ ան-
հաղաքար ծծելէ : Գիտեմ դուն վերնալիք չունիս . միայն
թէ տէր ինքնին՝ բանիւ բերանոյ իւրոյ ստտակեցէ լոզ-
րեզ . . . եւ բու հօրդ բեւիարին հետ ՚ի լիճ հրոյ եւ
ծծմբոյ դատեցէ անվերջ :

Ուրեմն ի՞նչ դեղ եւ դարման կը մնայ գործել այս
չարհուրելի եւ հոգեպան ցաւուս դէմն առնելու հա-

մար, եթէ ոչ սիրոյ եւ խնայողութեան կանոն դապեղանին
 'ի գործ արկանել եւ միշտ պատրաստի ունենալ : Չի ըստ
 սրբազան առաքելոյն և սէրն ոչ երբեք նախանձի : Եթէ որ
 սիրոյ Ազնիւ պատուիրանէն լաւմը բռնած մնամք ան-
 շուշտ կ'փախչի եւ կը հեռանայ նոյն ախտ չար : Լաւ
 միտ պահելու է՝ մեր մեկնիչ Սարգիս շորհալույն պս
 խրատն որ կըսէ , Իմաստասիրին պարտ եւ արժան է ա-
 զատամիտ լինել 'ի նախանձուէ եւ 'ի դառնութենէ եւ 'ի
 'յիսանալոյ եւ անպա է տիրապէս Իմաստուն :
 Եւ յայնչեւ յայնչեւ ի համարութի այն մարդուն , որ
 սիրով եւ խնայողութեամբ 'ի յայնչեւ նախանձու ախտին :
 Եւ իւրաքանչիւր մոլութիւն մարդոյս բարոյականը որ բն-
 յու համար մէկ մէկ զօրեղ թշնամիներէն նպաստագինած
 որոնց դէմ առաքինին կ'պարտաւորի կանոնաւոր պատ-
 իրաստութեամբ, երկայնամիտ համբերութեամբ : Իւր կե-
 նաց ճանապարհին մէջ մշտնադէմ պտտեալով : Եթէ
 բարեբախտութեամբ յայնչեւ եւ բաջ հոնորիսացաւ ան-
 շուշտ իւր վերջի անգին պսակն կոստիւն : Այս ուշխարհիս
 մէջ բարի եւ ցանկալի անուէնն անմահութեամբ ժառան-
 դերով եւ 'ի վերջնումն սրբոց հետ անմահ դատին առաջ
 անթարգմանելի սուրբ Ալեքլուայն երգելով : Յայնչեւ
 իւր ԺԴ , 2 համար :

...

ԱՆՁՆԱՆՈՒԵՐ

ԳՈՐԾԱԿԱԼԻ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ :

ՎԱՆ , Մկրտիչ Տ . Առումեան 'ի գրանոցի Վասպուրական
Արծույն :

ՎԱԼԵՐԸԱՊԼՏ , Գրիգոր Աղա Տ . Մկրտչեան Մա-
լեցով :

ԱԼԻՒՆ , Խաչատուր Խան Տ , Երսիսեանց եւ միանգամայն
գործակալ Տարօնոյ եւ Ռուսաստանի Հայոց :

ՏՓԽԻՍ . շքեղարուեստ Յովհաննէս Աղա Բաբանեան Բա-
թանեանց :

ՏՐԱՊԵՉՈՆ . Աղաձան Աղա Յովհաննէսեան :

ՊՕԼԻՍ . Պ . Յակովբ Աղուանեան Վանցի 'ի Պալթաձի Խան
ՉՈՒՒՍԻՆ . Պ , Սարգիս Տէր Մարգարեան Վանանդ եցւոյ :
ԲԵՐԵԱ . Յովհաննէս Աղա Միսաքեան :

ՍԱԼԱՄԱՍ , Յակովբ Միրզայեան Մելիք Յակովբեանց .
միանգամայն գործակալ Պարսկաստանի Հայոց :

ԳԷՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՒԿ

Ի Վան , 'ի Կարին , 'ի Մուշ , 'ի Բաղէշ , 'ի Տրապիզոն 2 ու
կէս Օսմանցի քսան զուրուշնոց արծաթ Մէճիտիկ :

Ի Պօլիս , 'ի Զմիւռն , 'ի Բերիս , երեք արծաթ քսան
զուրուշնոց Մէճիտիկ :

Ի Ռուսաստան եւ 'ի Պարսկաստան , այսինքն 'ի Տփլիս ,
Աղեքսանդրոլ , 'ի Վաղարշապատ 'ի Դալլիս Ժ եւ այլն , չորս
արծաթ Մանեթ :

Գին միոյ տետրակի 7 զուրուշ : Ճանապարհին ծախքը
Խմբագիրը պիտի վճարէ :

ፍብረሳ ንተሳታፊ-ጽዮና

Ver. 1000

ՀԱՆՐԱՆԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ፊዩዊላይዝርት ሲሆን

ጳጵሳው ሳታክሳው ሳታክሳው ሳታክሳው ሳታክሳው

ՀԱՆՐԱՊԵՏԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԵՆԱԸՆԵՆ

[Faint handwritten notes at the bottom of the page]

[illegible]

ՏԻՍԱՐԱՆԳ ԷՍՏԻՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ

[illegible]

FRUITFUL FATHERS.

... ..

1890, 1891, 1892, 1893, 1894, 1895, 1896, 1897, 1898, 1899, 1900, 1901, 1902, 1903, 1904, 1905, 1906, 1907, 1908, 1909, 1910, 1911, 1912, 1913, 1914, 1915, 1916, 1917, 1918, 1919, 1920, 1921, 1922, 1923, 1924, 1925, 1926, 1927, 1928, 1929, 1930, 1931, 1932, 1933, 1934, 1935, 1936, 1937, 1938, 1939, 1940, 1941, 1942, 1943, 1944, 1945, 1946, 1947, 1948, 1949, 1950, 1951, 1952, 1953, 1954, 1955, 1956, 1957, 1958, 1959, 1960, 1961, 1962, 1963, 1964, 1965, 1966, 1967, 1968, 1969, 1970, 1971, 1972, 1973, 1974, 1975, 1976, 1977, 1978, 1979, 1980, 1981, 1982, 1983, 1984, 1985, 1986, 1987, 1988, 1989, 1990, 1991, 1992, 1993, 1994, 1995, 1996, 1997, 1998, 1999, 2000, 2001, 2002, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2017, 2018, 2019, 2020, 2021, 2022, 2023, 2024, 2025, 2026, 2027, 2028, 2029, 2030, 2031, 2032, 2033, 2034, 2035, 2036, 2037, 2038, 2039, 2040, 2041, 2042, 2043, 2044, 2045, 2046, 2047, 2048, 2049, 2050, 2051, 2052, 2053, 2054, 2055, 2056, 2057, 2058, 2059, 2060, 2061, 2062, 2063, 2064, 2065, 2066, 2067, 2068, 2069, 2070, 2071, 2072, 2073, 2074, 2075, 2076, 2077, 2078, 2079, 2080, 2081, 2082, 2083, 2084, 2085, 2086, 2087, 2088, 2089, 2090, 2091, 2092, 2093, 2094, 2095, 2096, 2097, 2098, 2099, 2100, 2101, 2102, 2103, 2104, 2105, 2106, 2107, 2108, 2109, 2110, 2111, 2112, 2113, 2114, 2115, 2116, 2117, 2118, 2119, 2120, 2121, 2122, 2123, 2124, 2125, 2126, 2127, 2128, 2129, 2130, 2131, 2132, 2133, 2134, 2135, 2136, 2137, 2138, 2139, 2140, 2141, 2142, 2143, 2144, 2145, 2146, 2147, 2148, 2149, 2150, 2151, 2152, 2153, 2154, 2155, 2156, 2157, 2158, 2159, 2160, 2161, 2162, 2163, 2164, 2165, 2166, 2167, 2168, 2169, 2170, 2171, 2172, 2173, 2174, 2175, 2176, 2177, 2178, 2179, 2180, 2181, 2182, 2183, 2184, 2185, 2186, 2187, 2188, 2189, 2190, 2191, 2192, 2193, 2194, 2195, 2196, 2197, 2198, 2199, 2200, 2201, 2202, 2203, 2204, 2205, 2206, 2207, 2208, 2209, 2210, 2211, 2212, 2213, 2214, 2215, 2216, 2217, 2218, 2219, 2220, 2221, 2222, 2223, 2224, 2225, 2226, 2227, 2228, 2229, 2230, 2231, 2232, 2233, 2234, 2235, 2236, 2237, 2238, 2239, 2240, 2241, 2242, 2243, 2244, 2245, 2246, 2247, 2248, 2249, 2250, 2251, 2252, 2253, 2254, 2255, 2256, 2257, 2258, 2259, 2260, 2261, 2262, 2263, 2264, 2265, 2266, 2267, 2268, 2269, 2270, 2271, 2272, 2273, 2274, 2275, 2276, 2277, 2278, 2279, 2280, 2281, 2282, 2283, 2284, 2285, 2286, 2287, 2288, 2289, 2290, 2291, 2292, 2293, 2294, 2295, 2296, 2297, 2298, 2299, 2300, 2301, 2302, 2303, 2304, 2305, 2306, 2307, 2308, 2309, 2310, 2311, 2312, 2313, 2314, 2315, 2316, 2317, 2318, 2319, 2320, 2321, 2322, 2323, 2324, 2325, 2326, 2327, 2328, 2329, 2330, 2331, 2332, 2333, 2334, 2335, 2336, 2337, 2338, 2339, 2340, 2341, 2342, 2343, 2344, 2345, 2346, 2347, 2348, 2349, 2350, 2351, 2352, 2353, 2354, 2355, 2356, 2357, 2358, 2359, 2360, 2361, 2362, 2363, 2364, 2365, 2366, 2367, 2368, 2369, 2370, 2371, 2372, 2373, 2374, 2375, 2376, 2377, 2378, 2379, 2380, 2381, 2382, 2383, 2384, 2385, 2386, 2387, 2388, 2389, 2390, 2391, 2392, 2393, 2394, 2395, 2396, 2397, 2398, 2399, 2400, 2401, 2402, 2403, 2404, 2405, 2406, 2407, 2408, 2409, 2410, 2411, 2412, 2413, 2414, 2415, 2416, 2417, 2418, 2419, 2420, 2421, 2422, 2423, 2424, 2425, 2426, 2427, 2428, 2429, 2430, 2431, 2432, 2433, 2434, 2435, 2436, 2437, 2438, 2439, 2440, 2441, 2442, 2443, 2444, 2445, 2446, 2447, 2448, 2449, 2450, 2451, 2452, 2453, 2454, 2455, 2456, 2457, 2458, 2459, 2460, 2461, 2462, 2463, 2464, 2465, 2466, 2467, 2468, 2469, 2470, 2471, 2472, 2473, 2474, 2475, 2476, 2477, 2478, 2479, 2480, 2481, 2482, 2483, 2484, 2485, 2486, 2487, 2488, 2489, 2490, 2491, 2492, 2493, 2494, 2495, 2496, 2497, 2498, 2499, 2500, 2501, 2502, 2503, 2504, 2505, 2506, 2507, 2508, 2509, 2510, 2511, 2512, 2513, 2514, 2515, 2516, 2517, 2518, 2519, 2520, 2521, 2522, 2523, 2524, 2525, 2526, 2527, 2528, 2529, 2530, 2531, 2532, 2533, 2534, 2535, 2536, 2537, 2538, 2539, 2540, 2541, 2542, 2543, 2544, 2545, 2546, 2547, 2548, 2549, 2550, 2551, 2552, 2553, 2554, 2555, 2556, 2557, 2558, 2559, 2560, 2561, 2562, 2563, 2564, 2565, 2566, 2567, 2568, 2569, 2570, 2571, 25

1871
